ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ՀՆՀ)

Գործուն քաղաքացիական հասարակության (ԳՔՀ) ծրագրի համար

Թողարկման ամսաթիվ՝ 16-ը հուլիսի 2024թ.

Վերջնաժամկետ՝ 15-ը օգոստոսի 2024թ.՝ ժամը 18:00

ՀՆՀ-ի համարը՝ CSA-RFA-CBO-2024-002

Դրամաշնորհը տրամադրվում է Քաունթերփարթ Ինթերնեշնլի (Քաունթերփարթ) և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջև կնքված թիվ 72011123CA00001 համագործակցության պայմանագրի շրջանակներում:

Հայտերի ներկայացման հրավերում նկարագրվում է հայտի մշակման և ներկայացման համար հայտատուից պահանջվող տեղեկատվությունը: Հայտատուից ակնկալվում է ուսումնասիրել և հետևել սույն ՀՆՀ-ի պահանջներին, այլապես հայտը կմերժվի:

Դրամաշնորհի շրջանակներում փոխհատուցվում են բոլոր այն ողջամիտ, նպատակային, թույլատրելի ծախսերը, որոնք կապված են դրամաշնորհային ծրագրի հետ և համապատասխանում են ծախսերի համար կիրառելի չափորոշիչներին (Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի (ԴԿՕ) 2-րդ հոդվածի 200-րդ մասի Ե ենթամաս՝ Ծախսերի համար կիրառելի սկզբունքները, կամ Դաշնային գնումների կանոնակարգի (ԴԳԿ) 31-րդ մասը): Սույն դրամաշնորհի շրջանակներում չեն թույլատրվում շինարարական աշխատանքների համար նախատեսված ծախսեր:

Հայաստանում գրանցված կազմակերպությունների համար կկիրառվեն դրամաշնորհ ստացող ոչ ամերիկյան հասարակական կազմակերպությունների համար սահմանված դրույթները (տե՛ս հետևյալ հղումը՝ https://www.usaid.gov/sites/default/agency-policy/303mab.pdf):

ՀՆՀ-ն կազմված է ուղեկցող նամակից, ուղեցույցից և հավելվածներից:

ՀՆՀ-ի հայտարարմամբ ԳՔՀ-Քաունթերփարթը չի ստանձնում պարտավորություն դրամաշնորհի տրամադրման կամ հայտի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար: Հայտատուն իր վրա է վերցնում հայտի ներկայացման հետ կապված ռիսկը: Հայտի պատրաստման և ներկայացման բոլոր ծախսերը կատարվում են հայտատուի ֆինանսական միջոցներով:

Շնորհակալություն, որ հետաքրքրված եք ԳՔՀ-Քաունթերփարթի գործունեությամբ:

Հարգանքով՝

Մագդա Ավետիսյան՝
«Գործուն քաղաքացիական հասարակություն»
ծրագրի ղեկավար

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲԱԺԻՆ Ի: ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳՔՀ ծրագիրն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող հնգամյա ծրագիր է, որ իրականացվում է Քաունթերփարթի կողմից՝ Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի հետ համատեղ: Ծրագրի նպատակն է խթանել քաղաքացիական հասարակության կայունությունը՝ ֆինանսական կենսունակության ապահովման, կազմակերպական կարողությունների զարգացման և քաղաքականության մշակման շուրջ երկխոսության միջոցով: Քաունթերփարթն ունի ԳՔՀ ծրագրի իրականացման իր տեսլականը՝ տեղական կազմակերպություններին և քաղաքացիական շարժումներ նախաձեռնողներին հնարավորություն տալ ամրապնդելու քաղաքացիական հասարակության երկու կարևորագույն ուղղությունները՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ազդեցությունը քաղաքական երկխոսության վրա (արտաքին ազդեցություն) և շահագրգիռ կողմերի անունից ՔՀԿ-ների հանդես գալը (ներքին ազդեցություն):

Այդ նպատակով ԳՔՀ ծրագիրը կաջակցի ազգային և տեղական մակարդակներում քաղաքացիական հասարակության ֆինանսական կենսունակության ապահովմանը (Նպատակ 1) և համայնքահեն կազմակերպությունների կարողությունների զարգացմանը (Նպատակ 2)՝ ՔՀԿ-ների արտաքին և ներքին ազդեցությունն ապահովելու համար: ԳՔՀ ծրագիրը նաև կընդլայնի ՔՀԿ-ների գիտելիքներն ու հմտությունները և երկխոսության գնալու հնարավորությունները (Նպատակ 3), որպեսզի նրանք արդյունավետ կերպով մասնակցեն պետական քաղաքականության և փաստահեն շահերի պաշտպանության գործընթացներին՝ հզորացնելով ՔՀԿ-ների արտաքին ազդեցության կարողությունը: Նշված նպատակներին հասնելու համար հաշվի կառնվեն համայնքի կարիքներից բխող ծրագրերը, ինչպես նաև դրանց արդյունքների նկատմամբ համայնքի սեփականատեր լինելը (Նպատակ 4):

ԳՔՀ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Նպատակ 1. ՔՀԿ-ների ֆինանսական կայունության բարելավում
Նպատակ 2. Համայնքահեն կազմակերպությունների կարողությունների զարգացում
Նպատակ 3. Պետական քաղաքականության մշակման ուղղությամբ ՔՀԿ – կառավարություն երկխոսության խթանում
Նպատակ 4. Աջակցություն տեղական կարիքներից բխող նախաձեռնություններին

ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործուն քաղաքացիական հասարակություն» (ԳՔՀ) ծրագիրը, որ իրականացվում է Քաունթերփարթի կողմից՝ Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի հետ համատեղ, հրավիրում է հայաստանյան համայնքահեն կազմակերպություններին ներկայացնելու հայտ իրենց համայնքներում ժողովրդավարական գործընթացներին աջակցող գործողությունների իրականացման համար: Վերջինս ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- ***տեղական ինքնակառավարման մարմինների հետ երկխոսության հաստատում,***
- ***համայնքային խնդիրների վերհանման գործում ակտիվ ներգրավվածություն՝ կիրառելով համայնքի ավագանու նիստերին, հանրային լսումներին մասնակցության առկա մեխանիզմները,***
- ***համայնքի բյուջեի կազմման գործընթացին մասնակցություն և մոնիթորինգի իրականացում,***
- ***տեղական մակարդակում քաղաքականության մշակման գործընթացին աջակցություն,***
- ***ինչպես նաև կանանց, երիտասարդների և բնակչության մարգինալացված խմբերի ներգրավում:***

Աշխարհագրական ընդգրկվածության առումով դիտարկվում են հետևյալ չորս մարզերը՝ **Արարատ, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր**:

ԳՔՀ դրամաշնորհային ծրագրով ակնկալվում է Հայաստանի համայնքահեն կազմակերպությունների կարողությունների հզորացում՝ իրենց համայնքի զարգացմանն աջակցելու և մարզի բնակչության կարիքներին արձագանքելու նպատակով:

ԳՔՀ-Քաունթերփարթը նախատեսում է առաջին տարվա համար տրամադրել դրամաշնորհներ՝ յուրաքանչյուրը **մինչև 3,000,000 ՀՀԴ**-ի սահմաններում, որից մինչև **2,500,000 ՀՀԴ**-ն ծրագրի իրականացման և մինչև **500,000 ՀՀԴ**-ն կազմակերպության զարգացման (ԿԶ) համար: Ծրագրի իրականացման ընթացքում ԳՔՀ թիմը նախատեսում է միջնորդավորված ծառայություններ մատուցող կազմակերպության հետ միասին ԿԶ աջակցություն ցուցաբերել ընտրված համայնքահեն կազմակերպություններին: Անկախ ծրագրի տևողությունից՝ հայտատուն պետք է պահանջվող բյուջեից մինչև **500,000 ՀՀԴ** միանվագ գումար ներառի բյուջեի 0500 «Այլ ուղղակի ծախսերի» տակ: Այս գումարը նախատեսված է բացառապես կազմակերպության կարողությունների զարգացման գործողություններին առնչվող ծախսերը հոգալու համար:

Հայտերը կգնահատվեն անկախ հանձնաժողովի կողմից: Արդյունքում հաղթող կազմակերպությունների հետ կկնքվեն դրամաշնորհային պայմանագրեր:

Այն կազմակերպությունները, որոնք ծրագրի իրականացման առաջին տարում կցուցաբերեն բարձր արդյունավետություն և քաղաքականության փոփոխության վերջնական նպատակին հասնելու համար կայուն և հստակ ձեռնարկած քայլեր, հնարավորություն կունենան հաջորդ տարում ներկայացնելու նոր ծրագիր և շարունակելու ԳՔՀ-Քաունթերփարթի հետ համագործակցությունը: ԳՔՀ-Քաունթերփարթի աջակցության տևողությունը կամ գործողությունների իրականացման ժամկետը կախված են ԳՔՀ ծրագրի հիմնական ժամկետից (2022թ. հոկտեմբերի 20-ից մինչև 2027թ. հոկտեմբերի 19-ը):

ԳՔՀ-Քաունթերփարթն իրավունք է վերապահում իրեն ֆինանսավորելու հայտերից որևէ մեկը կամ չֆինանսավորելու դրանցից ոչ մեկը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. հայտատու կազմակերպությունը պետք է ծրագրային գործողություններն իրականացնի միայն թիրախային մարզում:

ԲԱԺԻՆ II. ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կախված ֆինանսական միջոցների առկայությունից՝ ԳՔՀ-Քաունթերփարթը նախատեսում է առաջին տարվա համար տրամադրել դրամաշնորհներ՝ յուրաքանչյուրը մինչև **3,000,000 ՀՀԴ**-ի սահմաններում, **մինչև մեկ տարի** ակնկալվող տևողությամբ:

Ծանոթություն. տրամադրվող դրամաշնորհն ազատված է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), և դրամաշնորհառուներին կտրվի ԱԱՀ-ից ազատման մասին պաշտոնական տեղեկանք:

ԳՔՀ-Քաունթերփարթը կվճարի միայն հաստատված բյուջեում նշված փաստացի ծախսերի համար:

ԲԱԺԻՆ III. ՀՆՀ-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հայտատուն կամ հայտը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

- կազմակերպությունը պետք է պաշտոնապես գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) և գործի ՀՀ օրենսդրության համաձայն: Այն դեպքում, երբ հայտատուն դեռ գրանցված չէ, հայտում պետք է հստակ նշվի մինչև պայմանագրի ստորագրումը գրանցվելու պարտավորության մասին.
- www.sam.gov կայքից ստանա կազմակերպության եզակի նույնականացման UEI համարը (նախքան դրամաշնորհային պայմանագրի կնքումը).
- հայտը պետք է համապատասխանի ծրագրի նպատակներին և սկզբունքներին, ներառի ակնկալվող արդյունքները, որոնք պետք է համապատասխանեն և կապված լինեն ծրագրի նպատակների հետ.
- հայտատուն չպետք է լինի ԱՄՆ կառավարության կողմից արգելված կազմակերպությունների ցանկում:

ՀՆՀ-ին մասնակցելու իրավունք ունեն.

- քաղաքացիական հասարակության կազմակերպությունները,
- հիմնադրամները

Համաֆինանսավորում

Պահանջվում է **մինչև** քսան տոկոս (20%) համաֆինանսավորում (կանխիկ կամ բնեղեն). հայտատուները խրախուսվում են ծրագրի իրականացման համար ներդրում կատարել իրենց սեփական կամ հնարավորության դեպքում այլ տեղական աղբյուրներից ստացված միջոցներից:

***Ուշադրություն**. կազմակերպության աշխատակազմի կամավոր տրամադրած ժամանակը չի ընդունվի որպես ներդրում*:

ԲԱԺԻՆ IV. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բոլոր հետաքրքրված հայտատուները պետք է ներկայացնեն հայտ, որն իր ծավալով չպետք է գերազանցի ինը (9) էջը և պետք է համապատասխանի տրամադրված հայտի ձևանմուշին (ներբեռնե՛ք հայտարարության հղումից): Հայտի ամբողջական փաթեթը պետք է ներկայացվի պահանջվող ձևաչափով և ներառի պահանջվող հավելվածները:

ՀՆՀ-ի համար անհրաժեշտ տեղեկատվություն.

- Հայտ
  - Տիտղոսաթերթ
  - Կազմակերպության եզակի նույնականացման UEI համար կամ UEI համարի հայցման ապացույց(հայտատուն պետք է ստանա UEI համարը նախքան դրամաշնորհային պայմանագրի կնքումը)
  - Կազմակերպության մասին հիմնական տեղեկություններ
  - Ծրագրի համառոտ նկարագրություն
  - Խնդրի նկարագրություն
  - Խնդրի լուծման ռազմավարություն
  - Շահառուների մասնակցություն, գործընկերներ, թիրախային լսարան
  - Ծրագրի կառավարում
  - Ծրագրի մոնիթորինգ
  - Ծրագրի կայունություն
  - Բյուջե և բյուջեի բացվածք
  - Գանտի աղյուսակ
  - Ծրագրի անձնակազմի ցուցակ
  - Կրկնակի ֆինանսավորումը բացառող հայտարարություն

- Դրամաշնորհ ստացող կազմակերպության պատշաճ ուսումնասիրման հարցաթերթ (պետք է լրացվի նախքան դրամաշնորհային պայմանագրի կնքումը)
- Համապատասխանություն ADS 303.3.8-ի պահանջներին

Հայտատուն պետք է հայտի մեջ ներկայացնի ծրագրի նպատակին հասնելու իր կարողությունները և փորձը: Հայտի մշակման հրահանգները նշված են ստորև:

Հայտերը կգնահատվեն սույն հայտարարության պահանջներին համապատասխան: Հայտատուներին խրախուսվում է ներկայացնել, թե ինչպես իրենց ծրագրային առաջարկը կնպաստի ԲԱԺԻՆ I-ում նշված ԳՔՀ-Քաունթերփարթի նպատակների իրագործմանը:

<u>Հայտի ներկայացման հրահանգներ.</u>

- Հայտատուի հայեցողությամբ հայտը կարող է ներկայացվել **հայերեն կամ անգլերեն**՝ օգտագործելով 12 տառաչափը, տողերի միջև մեկ (single) տարածությունը, A4 էջի ձևաչափը:
- Հայտի ծավալը չպետք է գերազանցի ինը (9) էջը:
- Հայտատուն պետք է կցի կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը:
- Հավելվածները և կից փաստաթղթերը չեն հաշվվում ինը (9) էջի առավելագույն ծավալի մեջ:

- Հայտը և բոլոր կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն մեկ ընդհանուր կնքված և ստորագրված PDF փաստաթղթով (ուշադրություն. PDF փաստաթուղթը պետք է ներառի առաջարկվող բյուջեն: Բացի դրանից՝ հայտատուն պետք է բյուջեն ներկայացնի առանձին՝ Excel ձևաչափով):
- Հայտը կմերժվի, եթե այն չի համապատասխանում ներկայացված ձևաչափին:
- Հրահանգներին համապատասխան հայտ ներկայացնելը չի երաշխավորում, որ ծրագիրը կֆինանսավորվի:
- ԳՔՀ-Քաունթերփարթը չի փոխհատուցի հայտի փաթեթի պատրաստման և (կամ) ներկայացման հետ կապված որևէ ծախս:
- Հայտի փաթեթը պետք է ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով **grants.CSA@counterpart.org** հասցեով:
- Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ **15-ը օգոստոսի 2024թ.՝ ժամը 18.00 (Երևանի ժամանակով)**:

Սույն ՀՆՀ-ի վերաբերյալ պարզաբանումներ կամ մեկնաբանություններ պարունակող հարցերը հայտատուները պետք է ուղարկեն **գրավոր՝** grants.CSA@counterpart.org էլեկտրոնային հասցեով, մինչև **2024թ.-ի հուլիսի 26-ը՝ ժամը 18:00**, որպեսզի պատասխանները հասանելի լինեն բոլոր հնարավոր հայտատուներին մինչև իրենց հայտերի ներկայացումը: Սահմանված ժամկետը լրանալուց հետո հարցեր այլևս չեն ընդունվի: **Հարց ու պատասխանը կհրապարակվի 2024թ.-ի հուլիսի 31-ին՝ ժամը 18:00, հայտարարության հղումի ներքո**:

Հայտատուի հայեցողությամբ **հայերեն կամ անգլերեն** լրացված հայտը պահանջվող կից փաստաթղթերի հետ միասին PDF ձևաչափով պետք է նախքան սույն ՀՆՀ-ի առաջին էջին նշված վերջնաժամկետի լրանալն ուղարկվի grants.CSA@counterpart.org էլեկտրոնային հասցեով (Ծանոթություն. PDF փաստաթուղթը պետք է ներառի առաջարկվող բյուջեն: Բացի դրանից՝ հայտատուն պետք է բյուջեն ներկայացնի առանձին՝ Excel ձևաչափով):

Սահմանափակումներ

- Սույն ՀՆՀ-ի համաձայն տրամադրվող դրամաշնորհային միջոցները չպետք է օգտագործվեն հետևյալ ապրանքներից որևէ մեկի ֆինանսավորման համար՝ ըստ ԱՄՆ ՄԶԳ-ի ADS 312-ի ապրանքների գնման չափանիշների.
  - ✓ **արգելված ապրանքներ**՝ ռազմական սարքավորումներ, հսկողության սարքավորումներ, ոստիկանության կամ այլ իրավապահ մարմինների գործունեության աջակցության ապրանքներ կամ սարքավորումներ, հղիության ընդհատման սարքավորումներ և ծառայություններ, շքեղ ապրանքներ, խաղային սարքավորումներ, եղանակի փոփոխման սարքավորումներ,
  - ✓ **սահմանափակված ապրանքներ**՝ գյուղատնտեսական ապրանքներ, շարժիչով փոխադրամիջոցներ, դեղագործական ապրանքներ, հակաբեղմնավորիչներ և պահպանակներ, պեստիցիդներ, օգտագործված սարքավորումներ, պարարտանյութեր,
  - ✓ **հեռահաղորդակցման սարքավորումներ**՝ դրամաշնորհառուները չպետք է օգտագործեն դրամաշնորհային միջոցները՝ ներառյալ ուղղակիորեն, անուղղակիորեն, համաֆինանսավորման մասնաբաժինը կամ դրամաշնորհառուի ներդրումը կամ ծրագրի եկամուտը, հեռահաղորդակցման սարքավորումներ ձեռք

բերելու համար, որոնք արգելված են Ազգային պաշտպանության լիազորման ակտի 889(բ) բաժնի դրույթներով (օրենք 115-232): Օրենսդրությունը մասնավորապես վերաբերում է հեռահաղորդակցության որոշ սարքավորումներին և ծառայություններին, որոնք արտադրվում կամ տրամադրվում են Huawei Technologies ընկերության կամ ZTE Corporation-ի, Hytera Communications Corporation-ի, Hangzhou Hikvision Digital Technology կամ Dahua Technology ընկերությունների (կամ նրանց որևէ մասնաճյուղի կամ դուստր ձեռնարկության) կողմից:

- ✓ **այլ՝** ապրանքներ կամ ծառայություններ, որոնց գնումը սահմանափակված կամ արգելված է ԱՄՆ ՄԶԳ-ի ADS 310-ի՝ ապրանքների ծագման երկրի վերաբերյալ կամ այլ կանոնակարգերով, կամ այնպիսի երկրներից և մատակարարներից են, որոնք ընդգրկված են ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից արգելված, կասեցված կամ չարտոնված ենթակապալառուների ցուցակում (http://www. epls.gov/):

- Ցանկացած գնում կամ գործողություն, որը կհամարվի ավելորդ՝ ծրագրի հաջող իրականացման տեսանկյունից:
- Նախկին պարտավորություններ և (կամ) անհույս պարտքեր
- Տույժեր և (կամ) տուգանքներ
- Այլ չթույլատրված ծախսեր՝ ըստ ԱՄՆ ՄԶԳ և (կամ) դաշնային կանոնակարգերի, այդ թվում՝ Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի (ԴԿՕ) 2-րդ հոդվածի 200-րդ մասի Ե ենթամասի՝ Ծախսերի համար կիրառելի սկզբունքները, և ԴԳԿ 31.2 բաժնի՝ Առևտրային կազմակերպությունների ծախսերի համար կիրառելի սկզբունքները:

<u>Ուշացած հայտեր</u>

Սահմանված վերջնաժամկետից ուշ ներկայացված հայտերը նշվում են որպես «ուշացած» և ենթակա չեն գնահատման կամ ընտրության: Այնուամենայնիվ, Քաունթերփարթն իրավունք է վերապահում իրեն ընդունելու և ներառելու ուշացած հայտերը գնահատման և ընտրության գործընթացում, եթե դա բխում է Քաունթերփարթի շահերից, և եթե հայտերը, որոնք ստացվել են ժամանակին,դեռևս չեն գնահատվել: **Ուշ կամ թերի ներկայացված հայտերը ռիսկի են ենթարկվում չհանձնվելու գնահատման:**

ԲԱԺԻՆ V. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գնահատման ընթացքում ԳՔՀ-Քաունթերփարթը պետք է քայլեր ձեռնարկի՝ համոզվելու, որ հանձնաժողովի անդամների և գնահատվող կազմակերպությունների միջև չկա շահերի բախում կամ վերջինիս առերևույթ դրսևորումը: Առերևույթ շահերի բախումը վերաբերում է մի իրավիճակի, երբ անձը կամ նրա ամուսինը, գործընկերը, երեխան, մտերիմ ընկերը կամ բարեկամն աշխատում կամ պատրաստվում է աշխատել կամ ունի ֆինանսական շահ (այդ թվում լինելով Տնօրենների խորհրդի չվճարվող անդամ) հանձնաժողովի գնահատմանն առաջադրված կազմակերպություններից որևէ մեկում: Հանձնաժողովի անդամները չպետք է ակնկալեն կամ ընդունեն դրամական նվեր, բարեգործություն կամ դրամական արժեք ունեցող որևէ այլ բան դրամաշնորհային մրցույթին մասնակցող կողմերից կամ դրամաշնորհառուներից:

Ուշադրություն. արտասովոր հանգամանքներում տեխնիկական գնահատման հանձնաժողովի նիստը կարող է հետաձգվել:

Հայտերի ներկայացման պահանջների համապատասխանության ստուգումը կիրականացվի դրամաշնորհային թիմի կողմից:

Հայտը կգնահատվի ստորև բերված գնահատման չափանիշների համաձայն: Ըստ անհրաժեշտության (այն դեպքում, երբ դրամաշնորհի տրամադրման որոշումը չի ընդունվել սկզբնական հայտերի հիման վրա) բանակցություններ կարող են տեղի ունենալ այն հայտատուների հետ, ում հայտը քննարկումից և բանակցությունից հետո իրական հնարավորություն ունի ընտրվելու դրամաշնորհի տրամադրման համար:

<u>Գնահատման չափանիշներ</u>

Հայտերը կգնահատվեն՝ ելնելով սույն հայտարարության պահանջներից, թեմայի համապատասխանությունից, ինչպես նաև ստեղծագործական գաղափարներից:

ա. Խնդրի լուծման ռազմավարություն՝ 20 միավոր

- ✓ Համապատասխանությունը ծրագրի նպատակներին և թիրախային շահառուներին
- ✓ Ծրագրի արդյունքների իրատեսական լինելը
- ✓ Ծրագրի արդյունքների կայունությունը

բ. Շահառուների ներգրավում, գործընկերներ և թիրախային լսարան՝ 10 միավոր

- ✓ Ծրագրային գործողությունների իրականացման նպատակով տարբեր շահագրգիռ կողմերի հետ համագործակցության արդյունավետությունը
- ✓ Ակնկալվող ազդեցությունը շահառուների վրա

գ. Ծրագրի կառավարում՝ 20 միավոր

Նախկին փորձ՝

- ✓ Ծրագրի կառավարման արդյունավետությունը՝ ծրագրային գործողությունների հաջող իրականացման տեսանկյունից
- ✓ Նմանատիպ ծրագրերի իրականացման նախկին փորձը
- ✓ Անձնակազմի հմտությունների համապատասխանությունը առաջարկվող ծրագրին
- ✓ Տեղական/մարզային մակարդակով ծրագրերի իրականացման փորձը
- ✓ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացման կարողությունը, փորձը

Ծրագրի անձնակազմի ցուցակ՝

- ✓ Ծրագրի գործողությունների իրականացման համար առաջարկվող անձնակազմի, միջոցների և աշխատանքային պայմանների առկայությունը

դ. Ծրագրի մոնիթորինգ՝ 10 միավոր

- ✓ Ծրագրի կառավարման և մոնիթորինգի մոտեցումների համապատասխանությունը

ե. Ծրագրի կայունություն՝ 30 միավոր

- ✓ Ներկայացված ծրագրային գործողությունների արդյունավետությունը՝ ծրագրի ժամկետի ընթացքում սահմանված նպատակին հասնելու համար
- ✓ Ծրագրի ավարտից հետո քաղաքականության փոփոխություններին հասնելուն ուղղված հետագա քայլերի հստակ և մանրամասն նկարագրությունը

զ. Իրագործելիությունը և ծախսարդյունավետությունը՝ 10 միավոր

- ✓ Ծախսերի ողջամիտ, թույլատրելի և նպատակային լինելը
- ✓ Ծրագրային առաջարկի ծախսարդյունավետությունը
- ✓ Ծրագրային առաջարկի համաֆինանսավորման տոկոսային մասնաբաժինը

ԲԱԺԻՆ VI. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանված ընթացակարգերի համաձայն հայտի ընտրությունը կամ ընտրության առաջարկը չի երաշխավորում դրամաշնորհի տրամադրումը: ԳՔՀ-ն կիրականացնի ընտրված բոլոր հայտատուների պատշաճ ուսումնասիրություն՝ գնահատելու, որ նրանք ունեն կամ կարող են ձեռք բերել անհրաժեշտ կառավարման հմտություններ տրամադրված ֆինանսական միջոցների և այլ ակտիվների վերաբերյալ հաշվետվողականության փոխհամաձայնեցված մեթոդներ կիրառելուհամար: Հաղթող կազմակերպությունը ԳՔՀ ծրագրից կստանա դրամաշնորհի տրամադրման մասին նամակ: Նամակը կուղարկվի հայտում նշված կազմակերպության կոնտակտային անձի հասցեին: Մրցույթը չանցած կազմակերպություններն ընդհանուր նամակով կտեղեկացվեն, որ իրենց հայտը չի անցել:

Դրամաշնորհի տրամադրման մասին նամակն ստանալուց հետո՝ մինչև դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը, տեղի կունենան վերջնական բանակցություններ:

<u>Հաշվետվությունների ներկայացման ընթացակարգեր</u>

Հաշվետվությունների ներկայացման պահանջները սահմանված կլինեն դրամաշնորհային պայմանագրում: Հաշվետվության կարգը և ժամանակացույցը ներառում են հետևյալը (դրամաշնորհառուին կտրվեն հաշվետվությունների ձևերը).

- ծրագրային հաշվետվություն, որ պետք է ներկայացվի ծրագրի իրականացման ընթացքում՝ ըստ դրամաշնորհային պայմանագրում նշված ժամանակացույցի: Այն ներառում է հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված առաջընթացի նկարագրությունը, ծրագրի իրականացման մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև հաջորդ հաշվետու ժամանակահատվածում նախատեսված գործողությունները: Համաֆինանսավորման մասին թարմ տեղեկատվություն պետք է ներկայացվի ամսական կտրվածքով.

- ավարտական ծրագրային հաշվետվություն, որտեղ նկարագրվում են ծրագրի խնդիրների և նպատակների իրագործումը, ծրագրի արդյունքները, ծրագրի իրականացման ընթացքում ծագած խնդիրները և տրված լուծումները:
- ֆինանսական հաշվետվություն, որ պետք է ներկայացվի ըստ դրամաշնորհային պայմանագրում նշված ժամանակացույցի.
- Ի հավելումն վերը նշվածի՝ դրամաշնորհառուն պետք է ներկայացնի նաև մանրամասն ավարտական ֆինանսական հաշվետվություն.
- բոլոր ֆինանսական հաշվետվությունները պետք է համապատասխանեն ծրագրային գործողություններին և ներառեն համաֆինանսավորման մասով տեղեկատվություն:

Դրամաշնորհային միջոցների վերջին հատկացումը և դրամաշնորհի հաջող ավարտը կամ փակումը կախված են ԳՔՀ-Քաունթերփարթին ֆինանսական և ծրագրային ավարտական հաշվետվությունների ներկայացումից և ընդունումից, ինչպես նաև դրամաշնորհի շրջանակներում ստացված և չօգտագործված գումարների վերադարձից:

ԲԱԺԻՆ VII. ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ՀՆՀ-ի թողարկմամբ ԳՔՀ-Քաունթերփարթը չի ստանձնում պարտավորություն դրամաշնորհի տրամադրման կամ հայտի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար:

ԳՔՀ-Քաունթերփարթն իրավունք է վերապահում իրեն ֆինանսավորելու հայտերից որևէ մեկը կամ չֆինանսավորելու դրանցից ոչ մեկը: Ավելին, ԳՔՀ-Քաունթերփարթն իրավունք է վերապահում իրեն սույն ՀՆՀ-ի արդյունքում չտրամադրելու ոչ մի դրամաշնորհ:

Կազմակերպության եզակի նույնականացման UEI համար

Կազմակերպության եզակի նույնականացման UEI համարը տրվում է System for Award Management (SAM) համակարգի կողմից՝ դաշնային կառավարության հետ աշխատող տնտեսվարող սուբյեկտներին և այլ կազմակերպություններին նույնականացնելու նպատակով: UEI համարը փոխարինել է DUNS համարին՝ որպես կազմակերպության եզակի նույնականացման համար: 2 CFR Part 25 – Universal Identifier and System for Award Management

- Կազմակերպությունները կարող են UEI համար ստանալ անմիջապես SAM.gov կայքից:

Բոլոր կազմակերպությունները կարող են UEI համար ստանալ՝ առանց SAM համակարգում ամբողջական գրանցում կատարելու: Ցանկացած կազմակերպություն, որ աշխատում է դաշնային կառավարության հետ կամ ստանում է ենթադրամաշնորհ Քաունթերփարթից, պարտավոր է ունենալ կազմակերպության եզակի նույնականացման UEI համար:

Ինչպե՞ս ստանալ UEI համար:

Եթե ձեր կազմակերպությունն արդեն գրանցված է SAM.gov համակարգում, ապա նրան արդեն հատկացվել է UEI համար: Այն տեսնելու համար պարզապես մուտք գործեք (log in) SAM.gov համակարգ:

Եթե ձեզ անհրաժեշտ է SAM.gov համակարգից ստանալ UEI համար, ապա ունեք երկու տարբերակ: Այն կազմակերպությունները, որոնք մտադիր են հայտ ներկայացնել դաշնային կառավարության կամ ամերիկյան կազմակերպության (Քաունթերփարթ Ինթերնեշնլ) հետ պայմանագիր կնքելու կամ վերջիններից ուղիղ դրամաշնորհ ստանալու նպատակով, պետք է մուտք գործեն SAM.gov համակարգ և ընտրեն “Register Entity”՝ UEI ստանալու համար: Նրանք, ովքեր ենթադրամաշնորհի նպատակով են ցանկանում UEI համար, պետք է ընտրեն “Get Unique Entity ID”:

UEI-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների և հրահանգավորման համար այցելեք հետևյալ կայքերը՝

https://www.workwithusaid.org/blog/navigating-the-sam-gov-unique-entity-identifier-process

Քաունթերփարթը չի կարող դրամաշնորհ տրամադրել հայտատուին, քանի դեռ վերջինս չի կատարել UEI համարի հետ կապված բոլոր պահանջները: Գրանցման գործընթացը կարող է տևել մի քանի շաբաթ: Հետևաբար հայտատուներին խրախուսվում է գրանցումն սկսել դիմելու գործընթացի սկզբում:

Հավելված 1. Պարտադիր կիրառվող ստանդարտ դրույթներ

Դրամաշնորհի ստացող ոչ ամերիկյան հասարակական կազմակերպությունների համար սահմանված ստանդարտ դրույթներ

Standard Provisions for Non-U.S. Nongovernmental Organizations - A Mandatory Reference for ADS Chapter 303 (usaid.gov)